

–Գոնէ անունը փոխեն:

–Ինչո՞ւ... աղէ՞կ գիտես, որ Հայկ օղի չէր խմեր:

–Պետրէ, Հայկական ընկերութեան օղին թէ՛ աղէկ չէ եւ թէ՛ սուղ է. Օրմանօզին տանինք մեր բարեկամները:

–Օրմանօզին ալ երեսուն աստիճան է, եղբայր. անցեալ շաբթու *օխա* մը *տիւզ* խմեցի հոն եւ դպաւ ինձի:

–Եթէ ինձ հարցուէր՝ ես *Կիւմիշ հալգալը*օին կը տանէի բարեկամներս:

–Եղբա՛յր, ան ալ օղիի հետ կտոր մը պանիր միայն կու տայ:

–*Ալթըն օլուք*օին երթանք:

–Եղբայրներ, մենք թաղին մէջ քիչ մը պիտի պտըտինք:

–Թաղին մէջ մարդ չկայ. ամենն ալ գինետուններու մէջ են այսօր:

–Մահտեսիին երթանք. մարդը հայ է եւ պատուական օղի ալ ունի:

–Շատ աղէկ, Մահտեսիին երթանք:

–Լա՛ւ... երթանք...

Քանի մը փողոց դառնալով՝ մտանք Մահտեսիին գինետունն, որու գինւոյ սեղանին առջեւ կայնած կը խմէին տասնի չափ հաստաբազուկ ձկնորս ազգայիններ:

–*Տամ աման, աման էֆէնտիւ, աման...*

–Թարալալա թարի լալալա, թիրալալա, թարիլլալալա:

–*Պինի վար...*

–Թարալալա թարիլլալամ...

–Թիրալալա թարիլլալամ...

–*Սէնին կիպի մանիճիլէր տէֆթերիմտէ... պինի վար:*

–Այս բարեկ...

–Թարալալա թարիլալիլալիլա... թիրալալալիլալամլամ... օ՛օօ՛հ:

–Այս բար...

–*Տամ աման աման աման եէր պէնի...*

–Ա՛ճ նայինք *տա՛յր* եւ տնկէ՛, – ըսաւ ասոնց մին իր քովինին՝ անոր կուրծքին հարուած մը տալով իւր ափով:

Այս հարուածն, որ անոնց քով մտերմութեան նշան կը համարուի, եթէ մեզ տրուի՝ գերեզմանի նշան կը...